

կարգութեանց բերմունս առաւելուն քան զնոսա» (Ընդհ. 15): Եւ երեք դար վերջ վանական մը դեռ կը պատմէ իւր վիճակակցաց համար, մանաւանդ աշխարհի մէջ բնակողաց, թէ անբարոյական արանց ու կանանց հետ նստած՝ «զուշակորոյս գինին ըմպեմք», այս ինքն ըմպելով կը կորուսանէին իրենց ուշը (Տաթ. Յոր. Ա, Գ):

Մինչդեռ մենաստան մը է դարուն անլուր խժդութեամբ կը սպանէ ազնուագարմ տիկին մը, որ նոյն վանականներէն աւելի բարեպաշտ եւ ողջամիտ, կ'արհամարհէ անոնց տգէտ նախապաշարմունքը, եւ իւր կանացի անսուրբ ոտներով կը կոխէ կարապետին սրբավայրին մէջ՝ իւր աղօթից խունկը ձօնելու (Մամ. 11), ընդ հակառակն նշանակալից է նկատել Ձ դարէն նոյն տիկնոջ սեռակցաց համարձակ մուտքն ուրիշ մենաստանաց զգուշաւոր սեմերէն ալ ներս՝ ծառայութեան պատճառաւ կամ պատրուակաւ, որ եկեղեցական իշխանութեան ուշադրութիւնն ու սաստը կը հրաւիրէ (աստ, 137): Եւ որոյ դէմ զրուած արգելքն այնչափ տկար կը մնայ, որ եօթ դար վերջ Մխ. Գոշ հայ մենաստանաց մէջ դեռ կը տեսնէր կանանցմէ «կովկիթս եւ սպասաւորս» (Խր. ոգ.). եւ Տաթեւացին նոյն վարդապետին հետ ձայն կը բար-